ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՖՐՈՒՆԶԵ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն քաղաքական, հասարակական գործիչ Ֆրունզե Խառատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Լվովյան փողոցի հ. 7 շենքի ճակատային մասում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՖՐՈՒՆԶԵ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ֆրունզե Արմենակի Խառատյանը ծնվել է 1927 թվականի սեպտեմբերի 29-ին, Երևանում:

1949-1954թթ.. սովորել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում: Եղել է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ:

1950-1970թթ. ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետում աշխատել է որպես դասախոս, պետութուն, իրավունքի ամբիոնի դոցենտ:

1970 թվականին աշխատել է ՆԳՆ համակարգում՝ որպես Երևան քաղաքի ԲԽՍՍ բաժնի պետ, իսկ 1972 թվականից՝ որպես Երևան քաղաքի քրեական հետախուզության վարչության պետի տեղակալ, ունեցել է միլիցիայի գնդապետի կոչում:

1976-1979թթ. աշխատել է ԵԺՏԻ՝ որպես իրավունքի ամբիոնի դասախոս, 1991-1995թթ. եղել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի իրավունքի ամբիոնի վարիչ:

Ֆ. Խառատյանը եղել է 1995-1999թթ՝ ԱԺ առաջին և 1999-2003թթ. երկրորդ գումարման պատգամավոր, ԱԺ պետա-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի Երվոպառլամենտի փախստականների հարցերով մշտական հանձնաժողովի անդամ:

Նա եղել է ավելի քան 30 օրինագծերի հեղինակ, ՀՀ Սահմանադրական բարեփոխումների ժամանակավոր հանձնաժողովի անդամ: Եղել է ՀԿԿ խմբակցության ղեկավար, ՀԿԿ ԿԿ բյուրոյի անդամ:

Ֆրունզե Արմենակի Խառատյանը վարել է ակտիվ հասարակական-քաղաքական կյանք:

1999 թվականին հիմնադրել է Երևանի «Գալիք» համալսարանը, որի ռեկտորն է եղել մինչև 2012 թվականի դեկտեմբերի 25-ը:

Ֆրունզե Արմենակի Խառատյանը գիտական և քաղաքական ձեռքբերումների համար պարգևատրվել է մի շարք մեդալներով, մասնավորապես՝ Ալբերտ Շվեյցերի անվան մեդալ, Մ.Վ. Լոմոնոսովի 300-ամյակի մեդալ, Տիեզերագնացության 50-ամյակի մեդալ և այլն:

Ֆրունզե Խառատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Նոր Նորքի 1-ին զանգվածի Լվովյան փողոցի հ.7 շենքի ճակատային մասում փակցնելու համար միջնորդություն է ներկայացվել ՀՀ մշակույթի նախարարի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖՐՈՒՆԶԵ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ֆրունզե Խառատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՖՐՈՒՆԶԵ ԽԱՌԱՏՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ֆրունզե Խառատյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ